British Embassy Yerevan

Շվեդիա Sverige

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

UNDP Empowered lives. Resilient nations.

UKaid from the British people

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն International Center for Human Development

oxYGen

Ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված և երեխայի խնամքի համար տրամադրվող աջակցության պետական ծրագրերը

Ազգային ժողով- ՔՀԿ համագործակցության հարթակի հանդիպում

Ս.թ. փետրվարի 26-ին կայացավ Ազգային ժողով- ՔՀԿ համագործակցության հարթակի հանդիպումը, որի նպատակն էր հավաքագրել փորձագիտական առաջարկներ ժողովրդագրական իրավիճակի բարելավման և երեխայի խնամքի համար տրամադրվող աջակցության պետական ծրագրերի վերաբերյալ:

Հանդիպումը նախաձեռնվել էր «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի, ՀՀ Ազգային ժողովի, ՕքսԵՋեն հիմնադրամի, Ժողովրդավարության Վեսթմինսթր հիմնադրամի, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի հետ համատեղ, Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» և Շվեդիայի կառավարության օժանդակությամբ:

Որոշումներ՝

- Հարթակի հանդիպման ամփոփաթերթից բացի պատրաստել նաև քաղաքականությունների մասին դիրքորոշման փաստաթուղթ:
- Հարթակի հաջորդ հանդիպման թեմաներ. (ա) Քրեական- քրեադատավարական օրենքի փոփոխման հարցեր, որոնք վերաբերում են բռնության ենթարկված անձանց (բ) Զբաղվածության ծրագրերի հետ կապված մշտադիտարկման արդյունքների ներկայացում. առաջարկները կներկայացնի նաև ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Ես եմ համայնքը» ակումբի երիտասարդները:

Առաջարկներ

- Փոփոխություններ անել «Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի և երեխայի ծննդյան միանվագ նպաստների բարձրացման վերաբերյալ» նախագծի համապատասխան իրավական ակտում[1] և թույլ տալ, որ այս որոշումից օգտվեն նաև գյուղական բնակավայրում ապրող այն ծնողը, ով բնակվում է մարզում ավելի քան 5 տարի և ունի մինչև երկու տարեկան երեխա: Հաշվարկել նաև, թե նման որոշման արդյունքում, որքան լրացուցիչ գումար պետք կլինի հատկացնել բյուջեից:

[1] Իրավական ակտով նախատեսվում է 2020 թվականի հուլիսի 1-ից մինչև երեխայի երկու տարեկանը լրանալը խնամքի նպաստ նշանակել նաև ՀՀ բնակչության պետական ռեգիստրում երեխայի հետ նույն գյուղական բնակավայրի հասցեով հաշվառված և փաստացի բնակվող ծնողին, եթե երեխայի ծննդյան օրվա դրությամբ առնվազն մեկ տարի անընդմեջ ծնողը հաշվառված է և փաստացի բնակվում է գյուղական բնակավայրի հասցեով: **Հարկ է նաև նկատի ունենալ, որ նշված կարգավորումները տարածվելու են այն դեպքերի վրա, երբ երեխան ծնվել է 2020 թվականի հուլիսի 1-ին և դրանից հետո:** Գյուղական բնակավայրում բնակվող ծնողին, ով չի հանդիսանում վարձու աշխատող 2020 թ. հուլիսի 1-ից նշանակվող խնամքի նպաստի չափը կկազմի 26,500 դրամ:

- Մոնիթորինգի ենթարկել առաջին երեխային տրվող նպաստի արդյունավետությունը՝ ժողովրդագրական իրավիճակի բարելավման համատեքստում: Փորձագետներն առաջարկում են հետագայում վերանայել և հրաժարվել առաջին երեխային տրվող նպաստից և այդ գումարն ուղղորդել այլ միջոցառումների վրա:

- Մեխանիզմներ մշակել խնամքի ինստիտուտի կայացման համար, որպեսզի նպաստի գումարը ծառայի իր նպատակին և ուղղվի երեխայի կարիքների լուծմանը.

    - ✓ Ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ աշխատող ՀԿ-ները փաստում են, որ նպասները հաճախ ստիպողաբար յուրացվում են բռնարարի կողմից և ուղղվում՝ ոչ երեխաների կարիքները հոգալուն: Գումարի տնօրինումը վերահսկելու նպատակով անհրաժեշտ են մեկանիզմներ մշակել՝ ուսումնասիրելով միջազգային փորձը, օրինակ Ռուսատանում առկա է «Մայրական կապիտալի» գաղափար, երբ կնոջ անունով բանկում բացված է հաշվեհամար և ինքն է տնօրինում գումարը կամ ԱՄՆ-ի օրինակը՝ վաուչերային տարբերակը կամ գումարի փոխարեն տրամադրել երեխաների խնամքի համար անհրաժեշտ պարագաներ, որպես կորսված եկամուտի մասնակի փոխհատուցում:
    - ✓ երեխա ունենալը հաճախ դառնում է եկամուտի հիմնական աղբյուր, որն էլ հաճախ բերում է մանկալքության դեպքերի, երբ ծնողները խնամքի կենտրոններին են հանձնում իրենց երեխաներին:

- Աշխատանքը և ընտանիքը համատեղելու համար մշակել գործուն մեխանիզմներ. դայակի ինստիտուտի կայացման հարց, կերակրող մայրերի համար ավելի ճկուն աշխատանքային գրաֆիկ. փորձագետները նշում են, որ նպաստները չէ, որ խնդրին լուծում են բերելու:
- Կնոջ մայրանալու հարցը հաճախ շահարկվում է գործատուի կողմից և նրան դարձնում առավել խոցելի աշխատաշուկայում.
    - ✓ Մայրացած կանանցից շատ քչերն են վերադառնում աշխատանքի և կարիերայի լուրջ խնդիրների առջև են կանգում.
    - ✓ Գործատուն հաճախ չի ընդունում աշխատանքի կանանց՝ հաշվիի առնելով մայրանալու դեպքում ֆինանասական պարտավորվածությունները:

<u>Առաջարկ՝</u>

- Խրախուսել գործատուին մայրացած կնոջը աշխատանքի պահելը. հարկային արտոնություններ սահմանել, օրինակ, եկամտահարկի նվազեցում:
- Դրամական տույժի ենթարկել այն գործատուին, ով անգամ բանավոր հարցազրույցի ժամանակ կհարցնի նրա ընտանեկան կարգիվիճակի և երեխա ունենալու պլանների մասին:
- Պետական աջակցության ծրագեր՝ ուղղված բնակարանի բարելավման հարցը լուծելուն, ինչը խնդիր է ոչ միայն քաղաքաբնակ, այլև գյուղաբնակ ընտանիքների համար: Փորձագետները նշում են, որ ընտանիքը չի պլանավորում նոր երեխա՝ բնակարանային պայմանների ոչ բավարար լինելու պատճառով:
- Ստեղծել մանկապարտեզների այլընտրանքային մոդել՝ անցնել մարդ – ծառայություն կոնցեպտի:
- Ստեղծել դայակների լիցենզավորման ինստիտուտ

- Կառավարության կողմից ներկայացված ծրագերում առկա չեն պատշաճ հիմնավորուներ. օրինակ, կոնկրետ թիրախային խումբը, շահառուների թիվը, ինչպես ենք չափելու արդյունքը, ինչը բարդացնում է, որևէ փորձագիտական կարծիք հայտնել տվյալ ծրագրի վերաբերյալ: